



**ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ
2018թ.-ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 25 շատրվանող հորատանցք, 32 չշատրվանող հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ձնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ՝ մայիս և նոյեբեր ամիսներին կատարվել է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ՝ 80 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվել է շուրջ 18 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանով:

Հանքայնացման բարձր կոնցենտրացիաներ դիտվել են Ակնաշեն գյուղի N°199, Լուսագյուղի N°2022, Խորոնք գյուղի N°2023, Առափի գյուղի N°2043 գրունտային ջրհորներում և Հովտաշեն գյուղի N°2053, Սուրենավան գյուղի N°2067 շատրվանող հորատանցքերում:



Նիտրատ իոնի բարձր կոնցենտրացիաներ դիտվել են Մարտունի գյուղի N°38 շատրվանող հորատանցքում, Նիգավան գյուղի N°2010 և Խորոնք գյուղի N°2023 գրունտային ջրհորներում, Մարմաշեն գյուղի N°2035 աղբյուրում:



Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ կենտրոնացած էլքերով ստորերկրյա ջրադբյուրների ծախսերն աննշան են, կրում են փոփոխական և հիմնականում ժամանակավոր բնույթ:

Հյուսիսային ծալքավոր լեռնաշղթաների մարզում նկատվում են ջերմաստիճանային մեծ տատանումներ, քանի որ ջրերի ձևավորումը կատարվում է կարբոնատային ապարներում: №2058 դիտակետում ջերմաստիճանը տատանվում է (10.4-13.0)°C տիրույթում, իսկ №2059 դիտակետում՝ (8.7-11.0)°C:

Ստորերկրյա ջրերի №2058 դիտակետում հանքայնքացումը մայիսին դիտվել է 0.82գ/լ, նոյեմբերին՝ 0.92գ/լ, ինչը գտնվում է խմելու ջրին ներկայացվող պահանջների սահմաններում:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում ծախսի ամենամեծ տատանումները նկատվում են Արագածի գանգվածի բարձր հիպսոմետրիկ նիշերի դիտակետերում: Ոսկեթաս գյուղի վարչական տարածքի №2027 դիտակետում ծախսերը տատանվում են (3.65-5.34)լ/վ սահմաններում և կազմում 31.6%, իսկ Սառնաղբյուր գյուղի վարչական տարածքի №2028 դիտակետում՝ (3.35-25.1)լ/վ՝ կազմելով 86.6%:

Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղի վարչական տարածքի №2024 դիտակետում ստորերկրյա քաղցրահամ ջրերի միջին տարեկան մակարդակը նախորդ տարվա համեմատ իջել է ավելի քան 0.3մ, Հայկավան գյուղի վարչական տարածքի №2025 դիտակետում՝ շուրջ 0.2մ: №2024 դիտակետում բարձր մակարդակը կազմել է (-17.52)մ, իսկ ցածրը՝ (-17.96)մ տատանվելով 2.4%:

Վերին Ախուրյանի գոգավորությունում նկատվում են ծախսի փոփոխություններ: Գոգավորության լեռնալանջերի ստորոտներում ծախսի փոփոխությունները ավելի բարձր են, քան գոգավորության կենտրոնական մասերում: Ծախսի փոփոխությունները №2038 դիտակետերում տատանվում են (2.88-5.17)լ/վ սահմաններում և կազմում 44.3%, իսկ կենտրոնական մասի №2041 դիտակետում ծախսը տատանվում է (0.57-0.66)լ/վ սահմաններում՝ կազմելով 13.6%:

Գյումրիի գոգավորության Առափի և Ախուրյան բնակավայրերի վարչական տարածքների դիտակետերում ստորերկրյա ջրերի մակարդակները №2042 դիտակետում տատանվում են (1.52-1.64)մ, №2043 դիտակետում՝ (7.2-8.81)մ խորության սահմաններում և կազմում համապատասխանաբար 6.7% և 18.2%:

Հետևաբար, Վերին Ախուրյանի և Գյումրի գոգավորությունների լեռնալանջերում տատանումները կազմում են ավելի բարձր տոկոս, քան գոգավորությունների կենտրոնական մասերում: Տատանումները պայմանավորված են բնական երևույթներով (տեղումներ, գոլորշիացում):

Կենտրոնական հրաբխային մարզերի դիտակետերում նկատվում են ցածր և կայուն ջերմաստիճաններ: Համեմատաբար աննշան տատանումներով ցածր ջերմաստիճաններ են նկատվում Շիրակի մարզի Աշոցք գյուղի վարչական տարածքի №2039, №2040 դիտակետերում՝ (6.6-6.9)°C և (6.4-7.0)°C, որոնց տատանումները տարեկան կտրվածքում կազմում են (4.3-8.5)%:

Գյումրիի գոգավորության արևմտյան մասի №2037 դիտակետում ջրերի ջերմաստիճանները տատանվում են (9.7-11.6)°C, Ախուրյան գյուղի տարածքի №2043

դիտակետում՝ (11.4-12.8)°C սահմաններում: Ջերմաստիճանային տատանումները նշված դիտակետերում կազմում են համապատասխանաբար 16.3% և 10.9%:


Համեմատաբար ցածր ջերմաստիճանները գրանցվել են Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան մասում, Վարդանաշեն-Ակնաշեն բնակավայրերի №1533 և №2001 դիտակետերի ջրերում: Նշված դիտակետերում ջերմաստիճանները տատանվում են համապատասխանաբար (13.6-13.8)°C և (13.6-4.0)°C, ինչը կազմում է (1.4-2.8)%:




Գյումրիի գոգավորությունում նկատվում է ստորերկրյա ջրերի հանքայնացման տարբերություն Ախուրյան գետի աջ և ձախափնյա մասերում: Գետի աջափնյա մասում կամ Առափի գյուղի №2042 դիտակետում հանքայնացումը մայիսին կազմել է 0.96գ/լ, նոյեմբերին՝ 1.24գ/լ, իսկ ձախափնյա մասի Ախուրյան գյուղի №2030 և №2037 դիտակետերում՝ մայիսին 0.48գ/լ, նոյեմբերին՝ համապատասխանաբար 0.48գ/լ և 0.43գ/լ: Համեմատած 2017թ հետ ձախափնյա մասում հանքայնացման փոփոխություններ չեն նկատվում:



Վերին Ախուրյանի գոգավորությունում նկատվում է ցածր հանքայնացման ջրեր: Աշոցք գյուղի վարչական տարածքի №2038 և №2041 դիտակետերում ջրերի հանքայնացումը տատանվում է (0.10-0.13)գ/լ տիրույթում:

Գոգավորության հյուսիս-արևմտյան մասում, մակարդակների իջեցմանը համապատասխան Տարոնիկ, Ապագա, Լուսազյուղ, Ակնաշեն բնակավայրերի վարչական տարածքների դիտակետերում ընդհանուր առմամբ նկատվում է հանքայնացման բարձրացում:

Օախսերի մոտավոր կայունացմանը համապատասխան հանքայնացման աննշան փոփոխություններ է նկատվում գոգավորության կենտրոնական մասում՝ Ակնաշեն, Վարդանաշեն գյուղերի վարչական տարածքներում:







Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք


Ծախսի համեմատաբար մեղմ տատանումներ՝ 2.77-3.45լ/վ սահմաններում, նկատվում են Ղազարավան գյուղի №755 դիտակետում և կազմում է 19.7%:





Շատրվանոդ հորատանցքերի ծախսի իջեցումներ նկատվում է Արարատյան գոգավորության կենտրոնական մասում: Հովտաշատ գյուղի վարչական տարածքի №1523 դիտակետի ծախսը նախորդ տարվա համեմատ իջել է 0.6լ/վ-ով:


Ջերմաստիճանի համեմատաբար կայուն տատանումներ են նկատվում հրաբխածին նստվածքային ապարների հողմնահարման կեղևում ձևավորվող ջրերում՝ Մուլակ գյուղի №1832 դիտակետում:

Աննշան տատանումներ են նկատվում Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղի վարչական տարածքի №755 դիտակետում: Այստեղ ջրի ջերմաստիճանը տարվա ընթացքում տատանվում է (9.6-11.4)°C սահմաններում՝ կազմելով 15.7%:

Ծախսերի մոտավոր կայունացմանը համապատասխան հանքայնացման աննշան փոփոխություններ է նկատվում գոգավորության կենտրոնական մասում՝ Հովտաշատ, Միս, Հայանիստ գյուղերի վարչական տարածքներում:







Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի գոգավորությունում շատրվանոց հորատանցքերի ծախսի տատանումները կատարվում են համեմատաբար փոքր սահմաններում: Մասրիկի հարթավայրի №1810 և №1811 դիտակետերում հորատանցքերի ծախսերը տատանվում են համապատասխանաբար (7.47-8.67)լ/վ և (0.36-0.40)լ/վ, իսկ Ակունք գյուղի №1053 դիտակետում՝ (0.72-0.88)լ/վ և կազմում համապատասխանաբար 10.0%,13.8%և 17.1%:

Գեղարքունիքի մարզում ամենացածր ջերմաստիճանները գրանցվել են Ակունք գյուղի №31 և №1299 դիտակետերում (6.6-6.8)°C:


Սևանի գոգավորության Մասրիկի հարթավայրում ստորերկրյա ջրերի ջերմաստիճանը №1810, №1811 և №1812 դիտակետերում տատանվում է (7.8-8.3)°C է, Մարտունի քաղաքի հարավային մասի №38 դիտակետում՝ (9.5-9.8)°C սահմաններում, իսկ լճի հյուսիս-արևելյան մասում՝ Գանձակի №2013 դիտակետում կազմում է 7.0°C:




Հանքայնացման աննշան տատանումներ են նկատվում Սևանի գոգավորությունում, որտեղ չեն նկատվում բարձրացման կամ իջեցման միտում: Տատանումները պայմանավորված են բնական երևույթներով:



Մասրիկի գոգավորության №1809 դիտակետում հանքայնացումը մայիսին կազմել է 0.22գ/լ, նոյեմբերին՝ 0.19 գ/լ:

Մարտունի քաղաքի վարչական տարածքի №38 դիտակետում ջրի հանքայնացումը մայիսին կազմել է 0.30գ/լ, նոյեմբերին՝ 0.32գ/լ:

Կախված ստորերկրյա ջրերի բեռնաթափման գոտու հիպսոմետրիկ նիշերից և տեխնածին գործոնների առկայությունից ջրերի հանքայնացումը №31 դիտակետում դիտվում է 0,1գ/լ, №2014 դիտակետում՝ 0.37գ/լ:







Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Ծախսի փոփոխությունները նշանակալի են Եղեգնաձոր քաղաքի №787 դիտակետում և Գառնի գյուղի №845 դիտակետում, որտեղ տատանվում են (2.92-5.75)լ/վ և (0.13-0.51)լ/վ սահմաններում և կազմում համապատասխանաբար 9.2% և 74.5%: Ծախսերի տատանումների մեծ տարբերությունները պայմանավորված են ջրատար ապարների լիթոլոգիական կազմով:


Արարատյան գոգավորության հարավ-արևելյան մասի՝ №2065 և №2076 դիտակետերում, մակարդակի իջեցումներ չեն նկատվում:





Համեմատաբար աննշան տատանումներ են նկատվում №787 և №1830 դիտակետերում:

Ողջաբերդի լեռնաշղթայի №845 դիտակետում ջրի ջերմաստիճանը տատանվում է (14.0-15.4)°C և կազմում 9.0%: Ջերմաստիճանային տատանումները նշված դիտակետերում պայմանավորված են ջրատար հորիզոնի ոչ խորը տեղադրմամբ և կլիմայական պայմանների հետ ունեցած անմիջական կապով:

Համեմատաբար բարձր ջերմաստիճաններ նկատվում են Արարատյան գոգավորության հարավ-արևելյան մասում՝ Սուրենավան գյուղի №2065 և Եղեգնավան գյուղի №2067 դիտակետերում: Նշված դիտակետերի ջրերի ջերմաստիճանները տատանվում են համապատասխանաբար (14.2-15.0)°C և (20.2-21.2)°C: №2067 դիտակետի բարձր ջերմաստիճանը պայմանավորված է հանքային ջրերի առկայությամբ, որը նկատվում է հորատանցքերի ինքնաթափ ջրերից ածխաթթու գազի անջատմամբ, իսկ №2065 դիտակետի ջրի ջերմաստիճանի բարձրացումը պայմանավորված է տարվա շոգ եղանակներին ամրակապող խողովակների ջերմաստիճանների բարձրացմամբ:

Հանքայնացման տատանումներ նկատվում են Արարատյան գոգավորության հարավ-արևելյան մասում՝ Սուրենավան բնակավայրի վարչական տարածքի դիտակետում №2067 դիտակետում, որը բացատրվում է տվյալ դիտակետում հանքային ջրերի առկայությամբ:





Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Ծախսի մեծ տատանումներ են նկատվում Սյունիքի լեռնաշղթայի բարձրադիր դիտակետերում: Գորհայքի №529 դիտակետում ծախսը տատանվում է (1.57-2.05)լ/վ՝ կազմելով 23.4%, իսկ ցածրադիր գոտիներում՝ Անգեղակոթ, Շաքի և Սպանդարյան բնակավայրերի դիտակետերում նկատվում է ծախսի աննշան տատանումներ, №1175 դիտակետում կազմում են՝ (2.28-2.80)լ/վ, №537 դիտակետում՝ (2.06-2.46)լ/վ, որոնք համապատասխանաբար կազմում են 18.6% և 16.2%: Նշված բոլոր ջրաղբյուրներում ծախսի տատանումները պայմանավորված են բնական պայմաններով:

Գորիս քաղաքի վարչական տարածքի №1399 դիտակետում ծախսերը տատանվում են (3.70-4.63)լ/վ՝ կազմելով 20%: Այս դիտակետում ստորերկրյա ջրերը կապված են կարբոնատային կազմի ապարների հետ:

Համեմատաբար կայուն ջերմաստիճանների տատանումներ են նկատվում №1399 դիտակետում՝ (9.9-10.7)°C կազմելով (20.9-16.5)%:

Կախված հիպսոմետրիկ նիշերից Գորհայք-Շաքի բնակավայրերի №529 և №532 դիտակետերում ջրի ջերմաստիճանները (8.2-8.4)°C է, իսկ Անգեղակոթ բնակավայրի №1323 դիտակետում բարձրանում է մինչև 9.2°C:

Հարավային և հարավ-արևելյան ծալքավոր լեռնաշղթաների մարզի դիտակետերում նկատվում են համեմատաբար բարձր ջերմաստիճաններ: Ագարակաձոր և Եղեգնաձոր բնակավայրի №785 և №787 դիտակետերում ջրերի ջերմաստիճանը տատանվում են համապատասխանաբար (12.2-13.0)°C և (12.0-14.0)°C՝ կազմելով համապատասխանաբար 6.1% և 14.2%:

Հանքայնացման ցածր արժեքներ են նկատվում Որոտանի ավազանում, Շաքի, Գորհայք, Սպանդարյան բնակավայրերի №529, №532 և №537 դիտակետերում՝ տատանվելով (0.09-0.17)գ/լ սահմաններում:

